Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ռուսաց լեզու» (22 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- **դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3X4 չափի**
- **բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)**
- **անձը հաստատող փաստաթուղթ**
- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)**
- **ինքնակենսագրություն (Ձև 5)**
- **այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ**
- **ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)**
- **որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ**

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 18–ից 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 5-ին՝ ժամը 13:00-ին, Վանաձորի Մ. Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք.Վանաձոր, Աղայան 69: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 2-82-85 հեռախոսահամարով: